

**ԳՈՅԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԱՌՈՎ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ  
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

*Դարձվածքները կարևոր նշանակություն ունեն բոլոր լեզուներում. դրանք խոսքին հաղորդում են պատկերավորություն, արտահայտչականություն ու հուզականություն, միաժամանակ նպաստում խոսքի հակիրճությանն ու սեղմությանը:*

*Հոդվածում ներկայացվում են անվանական դարձվածքները հայերենում և անգլերենում, իսկ ավելի կոնկրետ՝ գոյական հիմնաբառով դարձվածային կապակցությունները երկու լեզուներում: Քննության են առնվում գոյական հիմնաբառով անվանական դարձվածային կապակցությունների ամենատարածված կադասյարները: Դարձվածքների բաղադրիչներն առանձին քննվում են խոսքի մասային պատկանելության տեսանկյունից, ուշադրության են արժանանում նաև դարձվածքների իմաստային և ռճական-կիրառական առանձնահատկությունները:*

**Քանալի բառեր.** *դարձվածային կապակցություն, գոյական, հիմնաբառ, կադասյար, բաղադրիչ, խոսքի մասային պատկանելություն, իմաստային հարաբերություններ, ռճական առանձնահատկություններ, զուգադրական քննություն*

Դարձվածքների իմացությունն ու գործածությունը էական նշանակություն ունի այս կամ այն լեզվով խոսող հանրության համար: Դրանց ճիշտ ու տեղին կիրառությունը հարստացնում է լեզուն զանազան իմաստային ու ռճական նրբերանգներով, և այդ է պատճառը, որ դարձվածային կապակցությունները նշանակալից տեղ են զբաղեցնում բոլոր լեզուներում:

Հայ լեզվաբանության մեջ դարձվածքներն ուսումնասիրվել են սկսած 30-ական թվականներից: Դրանց ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ հայտնի հայ լեզվաբաններ՝ Մ. Աբեղյանը, Ա. Մուրվալյանը, Ե. Գևորգյանը, Պ. Բեդիրյանը, Խ. Բաղիկյանը և այլք:

Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, դժվար է որոշել, թե բառի սկզբնական կամ իսկական նշանակությունը որն է, և թե ինչպիսի գուգորություններով է բառը նոր իմաստներ ստանում: Եվ դա վերաբերում է նաև բառերի կապակցություններին, որոնք նախ պատահաբար են առնվում նոր նշանակությամբ, ապա կրկնվելով՝ դառնում սովորական: «Բառերի այսպիսի նորիմաստ կապակցությունները սովորաբար կոչվում են դարձվածներ, որոնք, սակայն, մի բառի նշանակություն են ստանում և կարող են նաև մի բարդ բառ համարվել» /Աբեղյան, 1974: 123-124/:

Դարձվածային կապակցություններին ընդհանուր առմամբ բնորոշ է այն, որ դրանք հիմնականում արդեն պատրաստի կայուն կապակցություններ են, այսինքն՝ չեն ստեղծվում խոսելու պահին՝ այս կամ այն իրադրությամբ պայմանավորված, աչքի են ընկնում բաղադրիչների թույլ կամ ուժեղ սերտաճումով, արտահայտում են ամբողջացած նոր գաղափար, ունեն

փոխաբերական իմաստ, դրանց կազմի մեջ մտնող բաղադրիչ բառերը (կամ դրանցից գոնե մեկը) անփոխարինելի են: Գարձվածքը «կարող է ձևականորեն համընկնել ազատ բառակապակցությանը, բայց էապես տարբերվում է նրանից. հմմտ. **ձեռքերը լվանալ** (ազատ բառակապակցություն) և **ձեռքերը լվանալ** (դարձվածք՝ «մի կողմ քաշվել» վերաիմաստավորումով)» /Պետրոսյան, 1987: 175/:

Ա. Մարգարյանը գրում է. «...Բառերի այն կայուն կապակցությունը, որի բաղադրիչները միասնաբար մի նոր՝ փոխաբերական-այլաբերական իմաստ են արտահայտում, կոչվում է դարձվածք» /Մարգարյան, 1990: 301/:

Մեր հոդվածի նպատակն է քննել անվանական դարձվածային կապակցությունները հայերենում և անգլերենում, իսկ ավելի կոնկրետ՝ նրանք, որոնց գոյական բաղադրիչը կապակցության հիմնաբառն է, վեր հանել երկու լեզուներում դրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները, իմաստային և ոճական կիրառությունները, որոշել դրանց բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը:

Հայերենի դարձվածքները տեղ են գտել հայերենի բացատրական և դարձվածաբանական բառարաններում: Անգլերենի դարձվածաբանությունը մանրամասն ուսումնասիրության են ենթարկել տարբեր լեզվաբաններ, այդ թվում նաև ռուս հեղինակներ Ա. Սմիռնիցկին, Ն. Ամստվան, Ա. Կունինը, Ի. Առնոլդը և այլք: Սույն հոդվածում ընդգրկված օրինակները քաղել ենք այն դարձվածաբանական և բացատրական բառարաններից, որոնք նշված են գրականության ցանկում:

Հայերենում սովորաբար դարձվածքի վերջին բաղադրիչն է հանդես գալիս որպես դրա առանցքային բառ՝ հիմնաբառ, որը կարող է արտահայտված լինել տարբեր խոսքի մասերով: Ըստ այդմ՝ դարձվածքները լինում են երկու տեսակի՝ անվանական և բայական: Գոյական վերջնաբաղադրիչ են ունենում անվանական դարձվածքները, որոնց կազմությանը մասնակցում են նաև ածականը, թվականը, դերանունը, որոշ դերբայներ և կապեր:

Գոյականը որպես դարձվածքի հիմնաբառ է հանդես գալիս նախ և առաջ գոյականի հետ՝ այսինքն **գոյական + գոյական** կապակցության մեջ, որոնցում առաջին գոյականը կարող է հանդես գալ տարբեր հոլովներով /Մարգարյան, 1990: 315/.

ա) Ուղղական հոլովով՝ բառ-բաղադրիչների համագոր հարաբերությամբ, օրինակ՝ *թուք ու մուր, քուն ու դադար, քար ու քացախ, ծակ ու ծուկ, կրակ ու պատիժ, հաց ու պանիր, հող ու ջուր, հուրի-փերի, ճակատ առ ճակատ, ճար ու ճամփա, ճար ու ճրագ, պեժ ու կրակ, վարք ու բարք, ցավ ու չոռ, միս ու արյուն, շուն ու գել, ցուպ ու մախաղ, սողոմ-գոմոր, ուխտ ու պայման, փուշ ու տատասկ* և այլն:

բ) Սեռականով և բառի ուղիղ ձևով, ինչպես՝ *բերանի համ, դառնության բաժակ, բաժակի ընկեր, գայթակղության քար, քարափի գայլ, գայլի ճուտ, էշի հարսանիք, օձի ճուտ, աչքի լույս, աչքի գրող, ծտի խելք, կյանքի անիվ, կյանքի դպրոց, հոգու դեղ, հոգու պարտք, հորթի հրճվանք, Հուդայի համբույր, ձիթենու*

ճյուղ, Ղովտի կին, մածնի մերան, մեխի գլուխ, մկների ժողով, սարի արջ, սատանի կծիկ, քթի մազ և այլն:

գ) Հայցականով և տրականով՝ ծայրը ծայրին, ծունկ ծնկի, ճակատ ճակատի, խոտը բերանին, հացը ծնկին, խելքը գլխին, ձեռքը ծոցին, փրփուրը բերանին և այլն:

դ) Գործիականներով՝ ձեռքով-նոքով, համով-հոտով, քթով-մոթով, տնով-տեղով, պոզով-պոչով և այլն:

ե) Գործիականով և բառի ուղիղ ձևով՝ պոչով սուտ, պոզով սուտ, հացով մարդ և այլն:

Իհարկե, հայերենում դարձվածքներ կազմվում են նաև այլ հոլովներով արտահայտված գոյականներով, օրինակ՝ բացառականով ու բառի ուղիղ ձևով, ներգոյականով և բառի ուղիղ ձևով, ինչպես՝ *նոքից գլուխ, ճուտը ձվում* և այլն:

Անգլերենում ևս բազմազան են **գոյական + գոյական** կապակցությամբ դարձվածքները, որոնք բաժանվում են հետևյալ ենթատեսակների /Арнольд, 1986: 170-173/:

ա) **N + N (գոյ. + գոյ.)** տիպի կառույցներ՝ *calf-love* «սպասանեկան սեր», *table talk* «գրույց ճաշասեղանի շուրջ», *swan-song* «կարասի երգ՝ կյանքի վերջին գործը/երկը», *museum piece* «1. դարն անցած առարկա 2. թանգարանային մարդ», *soap opera* «բազմասերիանոց ֆիլմ, սերիալ», *ghost town* «քաղաք-ուրվական՝ վաղուց արդեն անմարդաբնակ քաղաք», *crocodile tears* «կոկորդիլոսի արցունքներ», *mother tongue* «մայրենի լեզու», *Vanity fair* «սնամիտության տոնավաճառ (աշխարհի մասին)» և այլն:

բ) **N's + N կամ Ns' + N (պատկանելություն ցույց քվոդ գոյականական կապակցություններ)**, ինչպես՝ *Hobson's choice* «ակամա/հարկադրված ընտրություն (XVII դարում Քեմբրիջում վճարովի ձիանոցի տեր Հոբսոնը ստիպում էր իր հաճախորդներին ընտրել ելքի մոտ կանգնած ձին)», *gentleman's gentleman* «անձնական սպասավոր. սենեկասպասավոր», *mother's boy/darling* «մայրիկի բալա», *dog's life* «շան կյանք», *ladies' man* «մեկը, ով ջանք չի խնայում կանանց գրավելու համար» և այլն: Սրանք համարժեք են հայերենի՝ սեռականով և բառի ուղիղ ձևով կազմված կառույցներին, որոնց անդրադարձանք վերևում: Տարբերությունն այն է, որ հայերենում ապաթարց չկա, և պատկանելության իմաստն արտահայտվում է հոլովական վերջավորությամբ, ինչպես՝ *թռչնի կաթ (չճարվող, հազվագյուտ սպրանք)*, *օջախի ծուխ*, *ջրի ճամփա* և այլն: Սեռականի իմաստն անգլերենում, ինչպես հայտնի է, արտահայտվում է նաև *of* նախորդով, որով կազմված դարձվածքները պատկանում են **N + prep. + N (գոյ. + նախդիր + գոյ.)** կաղապարին:

գ) **N + and + N (գոյ. + և + գոյ.)**՝ իրար հետ **և** շաղկապով կապված կապակցություններ՝ *coffee and cakes* (ամեր. խսկց.) «համեստ աշխատավարձ», *flesh and blood* «մսից ու արյունից կազմված, մարդկային զգացմունքներ և թույություններ ունեցող էակ», *root and branch* «հիմնովին, ամբողջովին, արմատապես», *neck and neck* «մարզ. հավասար, կողք կողքի (վազքի ժամանակ)», *body and soul* «ամբողջ հոգով, ողջ էությամբ», *bread and butter* «գոյության միջոց, հսկայագորյա հաց», *skin and bone* «հյուծված, նիհար

մարդ», *alpha and omega* «1. հիմնականը, գլխավորը, հավատամքը, ալֆան և օմեգան (հունական այբուբենի առաջին և վերջին տառերը) 2. սկիզբն ու վերջը», *the life and soul* «ընկերասմբի հոգին՝ ամենակենսուրախ մարդը» և այլն: Այս տիպի կառույցները կառուցվածքային տեսանկյունից համարժեք են հայերենի՝ **գոյական + գոյական** կաղապարով վերոնշյալ այն կառույցներին, որոնք կապվում են *ու* շաղկապով և գտնվում են համագոր հարաբերության մեջ, ինչպես՝ *ծակ ու ծուկ, կրակ ու պատիժ, հաց ու պանիր, հող ու ջուր* և այլն:

դ) **N + prep. + N (գոյ. + նախդիր + գոյ.)** *a child of shame/sin* «սպորինաձին երեխա, սպորինի զավակ», *face-to-face* «սնձամբ, առանձին», *a question of time* «լուծվող հարց՝ ժամանակի հարց», *manna from heaven* «երկնային մանանա՝ հանկարծառաբա քախտավորություն», *hand in hand* «միաժամանակ. զուգահեռ. համատեղ», *a heart of gold* «ոսկի սիրտ. հրաշալի մարդ», *a heart of stone* «քար սիրտ», *the wheel of Fortune* «քախտի անիվ», *a bag of nerves* «նյարդերի կծիկ», *the brain of a pigeon* «հավի ուղեղ (անխելք մարդու մասին)», *a way of life* «կենսակերպ», *a bird of passage* «փոփոխական մարդ», *the dove of peace* «փառադրության աղավնի», *a bolt from the blue* «ամայրոպ երկնքից, անսպասելի հրադարձություն կամ լուր», *a flight of fancy* «մտքի, երևակայության թռիչք» և այլն: Քանի որ ժամանակակից անգլերենի հոլովական համակարգը հայերենի հոլովական համակարգի նման հարուստ չէ, անգլերենում ամենատարբեր հոլովական իմաստներն արտահայտվում են նախդիրների օգնությամբ, ինչն ակնհայտ է բերված օրինակներից:

Գոյական հիմնաբառով դարձվածքներ են նաև **ածական + գոյական** կառույցները: Ինչպես հայերենում, այնպես էլ անգլերենում ածականի ու գոյականի կապակցությամբ բազմաթիվ դարձվածքներ կան, օրինակ հայերենում՝ *դատարկ կարաս (դատարկախոս, դատարկամիտ մարդ), ծակ բերան (բացբերան, գաղտնիք չպահող), կանաչ լույս, կանաչ արև, ճերմակ քամի, մազե կամուրջ (վտանգավոր փորձություն), մարմանդ ջուր, սև ցուցակ, սև սիրտ, սև ուժ (ուժեղ), տրոյական ձի, փափուկ սիրտ, քաղցր աչք* և այլն: Այսպիսի կապակցությունների շարքում շատ են նաև շրջասությունները: «Շրջասությունները շրջուն արտահայտություններ են, բառեր կամ կապակցություններ, որոնցով առարկան կամ գործողությունը անուղղակիորեն ենք անվանում» /Բեդիրյան, 2002: 5/: **Ածական + գոյական** կաղապարով շրջասությունների օրինակներ են՝ *անհատթ դյուցազն = Անդրանիկ, անմահ մահկանացու = Հովհաննես Այվազովսկի, մեծ լոռեցի = Հովհաննես Թումանյան, դեղին ջարդ = մշակութային արժեքների անխնա վաճառք, կանաչ սատանա = դոլար, մառախլապատ Ալբիոն = Անգլիա. Լոնդոն, սև ոսկի = նավթ, քնքուշ սեռ = կին, չաղ կատու = նորաթուխ հարուստ* և այլն:

Անգլերենում **A + N (ածական + գոյական)** կաղապարով դարձվածքների օրինակներ են՝ *blind alley* «փակուղի, նրբանցք/նրբուղի», *cold comfort* «թույլ մխիթարություն», *black/dark comedy* «թատր.՝ սև կատակերգություն (հիմքում ընկած է մռայլ/սև հումոր/սուր ծաղր)», *ugly duckling* «անճոռնի ճուտիկ (սկզբում անխոստումնայից, բայց հետագայում մեծ հաջողությունների հասած մարդ)», *bitter pill* «դառնություն, վիրավորանք, ստորացում», *blue blood* «կապույտ

արյուն (ազնվական ծագում ունեցող մարդկանց մասին)», *high life* «բարձրաշխարհիկ, արիստոկրատական հասարակություն», *honeymoon* «մեղրամիս», *dead language* «մեռած՝ այլևս չգործածվող լեզու», *lame excuse* «անհիմն, անհաջող պատրվակ, կաղացող պատճառաբանություն», *sore spot* «ցավոտ տեղը», *the Golden Age* «ոսկեդար», *a royal welcome* «թագավորների վայել ճոխ ընդունելություն» և այլն:

Գոյական հիմնաբառով դարձվածքների հաջորդ տեսակը **թվականի** և **գոյականի** կապակցությամբ կառույցներն են, որոնք կազմվում են քանակական և դասական թվականներով, ինչպես՝ *առաջին քայլ, առաջին ջութակ (որևէ գործի մեջ առաջին, գլխավոր դեմքը), երկու բառ (խոսք), երրորդ աչք, չորս պատ, մի թիզ, մի բերան, մի բուռ, յոթերորդ երկինք, յոթ պորտ, յոթ ծովի մերան, հազար բերան, ութերորդ հրաշալիք* և այլն: Անգլերենում (**Num. + N**) կապակցության օրինակներ են՝ *second nature* «խառնվածք, բնավորության բնորոշ գիծ, որ արդեն արմատավորվել է մարդու մեջ», *second hand* «երկրորդ ձեռքից, ոչ անմիջականորեն», *two-faced* «երկերեսանի», *a nine-days' wonder* «զգայացունց մի բան, որ արագ է մոռացվում», *first hand* «սկզբնաղբյուրից, անմիջականորեն», *first fruit* «աշխատանքի առաջին պտուղները», *the fifth column* «հինգերորդ շարասյուն՝ դավաճան, մատնիչ խմբավորում (երկրի ներսում)» և այլն:

Կան նաև **դերանվան** և **գոյականի** կապակցությամբ դարձվածքներ, ինչպես՝ այն աշխարհ, մյուս աշխարհ, ի՞նչ սրտով, ո՞ր օրվա և այլն: Անգլերենում **դերանուն + գոյական (Pron. + N)** կապակցության օրինակներ են՝ *to one's heart's content* «որքան սիրտն ուզի», *My aunt* «ա՛յ քեզ բան, անհավատալի է», *nobody home* «ծալը/խեղքը պակաս» և այլն:

Հաջորդը երկու լեզուներում **դերբայ + գոյական** կապակցությունն է: Հայերենում այդպիսիք կազմվում են հարակատար և ենթակայական դերբայներով, ինչպես օրինակ՝ *փչած տիկ (գոռոզ, հպարտ, ամբարտավան մարդու մասին), փորձած թան (ծանոթ մարդ, առարկա), սասկած (եփած) հավ, տաշած քար, մեռած հոգի (ներ), ծագող աստղ, հաչող շուն* և այլն: Անգլերենում դրանք կազմվում են **Participle 1 (ներկա) ու Participle 2 (անցյալ) դերբայների** և **գոյականի** օգնությամբ, ինչպես՝ *sucked orange* «հալից ընկած, ուժասպառ մարդ», *trained eye* «սուր աչք», *mixed train* «սպրանքամարդատար գնացք», *the rotten apple* «փսած խնձոր (վատ, անպետք մարդու մասին)», *lost sheep* «մոլորված գառ», *stolen/forbidden fruit* «սրգելված պտուղ», *an unwritten law* «չգրված օրենք», *crying shame* «խայտառակություն, ամոթալի երևույթ», *a nagging doubt* «տանջող կասկած» և այլն:

Եվ վերջապես գոյական հիմնաբառով դարձվածային կապակցություններ են կազմվում նաև կապի (նախդրության) և գոյականի համադրությամբ, այսինքն՝ ստացվում է **կապ (նախդրություն) + գոյական** կաղապարը: Օրինակ՝ հայերենում ունենք՝ *մինչև ականջները, մինչև Երուսաղեմ (շատ հեռու), մինչև եղունգների ծայրը, մինչև ատամները, մինչև աշխարհի ծայրը, առանց հետին մտքի, առանց մնացորդի* և այլն: Կապի և գոյականի կապակցությամբ այս դարձվածքները կարելի է համեմատել անգլերենում ամենատարբեր նախդիր-

ների և գոյականների կապակցությունների հետ, քանի որ հայերենի կապերը իմաստով նման են անգլերենի նախդիրներին: Անգլերենում ունենք **նախդիր + գոյական (prep. + N)** կապակցությամբ հետևյալ կառույցները՝ *under the counter* «ծածուկ, գաղտագողի, սուսուփուս», *by heart* «անգիր», *on the edge* «անհամբեր, գրգռված, լարված», *at odds* «անհամերաշխ, գժտված», *out of place* «անտեղի, ոչ տեղին, անհարկի», *in a word* «մի խոսքով», *in grain* «էությանբ, բնությամբ», *against the grain* «մեկի կամքին հակառակ», *on the spot* «անմիջապես, տեղում, տեղնուտեղը» և այլն:

Ինչ վերաբերում է դարձվածքների կիրառությանը, դրանք «թեև կարող են օգտագործվել խոսքի տարբեր տեսակներում (գիտական, հրապարակա-խոսական և այլն), բայց դրանց գործածության ամենահիմնական, հարազատ ոլորտը գեղարվեստական գրականությունն է: Պատահական չէ, որ հատկապես գրողներն ու բանաստեղծներն են անչափ բարձր գնահատում դրանց դերը» /Մելքոնյան, 1984: 200-201/: Հետևաբար, դրանց ոճական արժեքը դրսևորվում է հատկապես գեղարվեստական գրականության մեջ: «Մեծ է ու բազմաբնույթ դարձվածքի ոճական արժեքը գեղարվեստական խոսքում. այն նախ և առաջ պատկերավոր ու տպավորիչ է դարձնում խոսքը, նպաստում նրա հակիրճությանն ու սեղմությանը, ազգային երանգավորում հաղորդում և՛ հեղինակի, և՛ կերպարների խոսքին, բացահայտում նրանցից յուրաքանչյուրին բնորոշ լեզվամտածողությունը» /Եզեկյան, 2003: 183-184/:

Հայերենում դարձվածքների՝ խոսքին պատկերավորություն, հակիրճություն, բնականակություն հաղորդելու օրինակ կարող է հանդիսանալ Հ. Թումանյանի հետևյալ հատվածը.

Ասին ու **խելք խելքի տվին,**  
**Հավան կացան,** պայման դրին.  
 Բայց՝ արի տես...որ փող չունեն:  
 Շատ **միտք արին,** թե ինչ անեն.  
 Վերջը եկան փրշի մոտը,  
**Ընկան** նրրա **ձեռն ու ոտը...** (Թումանյան, 1950, էջ 268)

Անգլերենում ևս դժվար է պատկերացնել թե՛ չափածո և թե՛ արձակ ստեղծագործություններն առանց դարձվածքների, որոնք յուրահատուկ համ ու հոտ են հաղորդում այս կամ այն ստեղծագործությանը: Դա ցայտուն երևում է հետևյալ օրինակներում.

“Kitty’s **heart sank**. The Mother Superior’s tone admitted of no reply; she knew her well enough to know that she would be insensible to entreaty” (Maugham, 1981, էջ 195).

“It had always seemed perfectly natural that he should **lead a dog’s life** in order to provide them with board and lodging, clothes, holidays and money for **odds and ends...**” (Maugham, 1981, էջ 25).

Այս օրինակները երևի թե այդքան արտահայտիչ ու բնական չլինեին, եթե դրանցում հեղինակի օգտագործած դարձվածքները փոխարինվեին այլ բառերով:

Գարձվածքների իմաստային առանձնահատկություններին անդրադառնալով՝ նշենք, որ դարձվածային կապակցությունների մեր քննած օրինակներում երկու լեզուներում էլ շատ կան այնպիսիք, որոնք կազմված են մարդու մարմնի մասերի անուններով՝ *գլուխ, ականջ, աչք, թև, ձեռք, երես, սիրտ, վիզ, ոտք* և այլն: «Մարդու մարմնի մասերի անուններով կազմված դարձվածքները կոչվում են նաև **սոմատիկ** դարձվածքներ» /Եգեկյան, 2003: 190/:

Հայերենում մեծ թիվ են կազմում մարդու մարմնի մասերի անուններով կազմված հատկապես բայական դարձվածքները, ինչպես՝ *գլխին նստել, գլուխ բերել, ականջ դնել, ականջը տանել, աչք զցել, աչքով տալ, աչքի ընկնել, ձեռք զցել, ձեռք մեկնել, ձեռքը սեղմել, թևերը փռել, թևերը թափվել, երես առնել, երեսը պատռել, սիրտը թուլանալ, սիրտը կոտրվել, սիրտը պայթել, վիզ ծռել, վիզը ոլորել, ոտքերը լիզել, ոտքը խաղաղվել, ոտքը կոտրվել* և այլն: Անգլերենում ունենք՝ *hide one's head* «թաքնվել, ամաչել մարդկանց աչքին երևալուց», *keep one's head above ground* «սպրել, գոյություն ունենալ, գոյությունը քարշ տալ», *fall upon sb's ear* «ականջին հասնել», *give a good eye* «հոգալ. մեծ ուշադրության արժանացնել մեկին», *fall under sb's eye* «իր վրա ուշադրություն հրավիրել», *burst upon the eye* «աչքի ընկնել», *have a long arm* «ի վիճակի լինել հեռվից վնասելու», *keep at arm's length* «պաշտոնական հարաբերությունների մեջ լինել», *grind the face of sb* «կեղեքել, ճնշել, հարստահարել», *lose face* «ստորանալ, նվաստացման ենթարկվել, հեղինակագրկվել», *be sick at heart* «թախծել, կարոտել, սիրտը ճնկվել», *break one's heart* «սիրտը կոտրել», *fall upon sb's neck* «ինչ-որ մեկի վզովն ընկնել», *save one's neck* «կախադանից խուսափել», *break the neck of* «գործի մեջքը կոտրել, մեծ մասը կատարել», *get one's foot on the ladder* «սնել հաջողության առաջին քայլը», *carry smb off his feet* «ոգևորել, խանդավառել» և այլն:

Թվարկված բայական դարձվածքները կարելի է անվերջ շարունակել, սակայն սույն հոդվածի սահմաններում մեր նպատակն է ուսումնասիրել ոչ թե բայական, այլ **գոյական** վերջնաբաղադրիչով (հիմնաբառով) **անվանական** դարձվածքները: Գոյական հիմնաբառով անվանական դարձվածքների մեջ ևս կան այնպիսիք, որոնց բաղադրիչներից մեկը մարդու մարմնի որևէ մասի անվանում է: Սրանք թեև թվով շատ չեն, սակայն կարևոր տեղ են զբաղեցնում երկու լեզուներում:

«Եթե դարձվածքների համար այդքան հատկանշական է հուզաարտահայտչական երանգով օժտված լինելը, խոսողի վերաբերմունք արտահայտելը, նշանակում է, որպես իմաստային բնորոշ յուրահատկություն, դա պիտի դառնա դարձվածքների դասակարգման հիմունք» /Մելքոնյան, 1984: 195/: Գրանից ելնելով՝ ըստ դարձվածքների արտահայտած իմաստների՝ երկու լեզուներում դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) դրական իմաստներ (կապեր, հարաբերություններ) արտահայտող դարձվածքներ, բ) բացասական իմաստներ (կապեր, հարաբերություններ) արտահայտող դարձվածքներ:

**Դրական** իմաստներ են արտահայտում մարդու մարմնի մասերի անվանումներով կազմված գոյական վերջնաբաղադրիչով հետևյալ դարձվածային կապակցությունները հայերենում՝ *արթուն գլուխ (սթափ մտածող մարդ)*,

ծանր գլուխ (ծանրախոհ, լրջմիտ), սառը գլուխ (հավասարակշիռ դատող մարդ), աշխարհի աչք (բոլորի կողմից սիրված մարդ), բարձր աչք (արժանապատիվ կեցվածք), կռունկի աչք (շատ պարզ, մաքուր), քաղցր աչք (բարեհաճություն), բաց ձեռք (շռայլ), օրհնյալ ձեռք (ազնիվ գործեր կատարող մարդ), թեթև ձեռք (լավ բուժող, ոտքի կանգնեցնող բժշկի մասին), ուժեղ ձեռք (հասարակության կյանքին խստիվ հետևող, դեկավարություն ապահովող ձեռք), աջ թև (հավատարիմ օգնական, նեցուկ), ճերմակ երես (արդար), փափուկ երես (թույլ, չդիմադրող, մերժել չկարողացող), բարի ոտք, թեթև ոտք (բախտաբեր մուտք), թև ու թիկունք (օգնական ու հենարան) և այլն: Անգլերենում ունենք՝ *long head/ long-headed* «խորաբափանց, հեռատես, շրջահայաց», *clear head/ clear-headed* «պայծառ գլուխ, խելացի», *wise head* «խելք, խելացի», *quick eye* «սուր աչք, զննող, դիտունակ», *straight eye* «անվրեպ աչք, ճիշտ աչքաչափ», *easy on the eye* «հաճելի դեմքով», *sharp eye* «սուր, ուշադիր աչք», *an open hand* «շռայլ, ձեռքը բաց», *an old hand* «փորձառու մարդ», *firm hand* «ուժեղ, խստորեն վերահսկող ձեռք», *sea legs* «հավասարակշռությունը, իրեն պահելու կարողությունը (նավի վրա)», *light-footed* «արագաշարժ, ճարպիկ, ժիր» և այլն:

Դարձվածքների ոճական արժեքներից մեկն էլ դրանց հեզմական, արհամարհական, հաճախ նաև հանդիմանական վերաբերմունք արտահայտելն է: Այդպիսի դարձվածքները նպաստում են խոսքի համապատասխան երանգավորմանը: Դրանք դասվում են բացասական իմաստներ ունեցող դարձվածքների շարքին:

**Քացասական** իմաստ արտահայտող գոյական վերջնաբաղդրիչով դարձվածային կապակցությունների թվին են պատկանում մարդու մարմնի մասերի անուններով կազմված հետևյալ դարձվածքները հայերենում՝ *ամպրոպ գլուխ (անխելք, դատարկագլուխ)*, *անգդակ գլուխ (սեփական կարծիք չունեցող մարդ)*, *դդում գլուխ (դատարկագլուխ)*, *բարձր գլուխ (գոռոզամիտ)*, *գունդ գլուխ (համառ)*, *դատարկ գլուխ (դատարկամիտ, բթամիտ)*, *կախ գլուխ (խորամանկ)*, *կոր գլուխ (ընկճված մարդ)*, *խուլ ականց (ասածը բանի տեղ չդնող)*, *պինդ ականց (անուշադիր)*, *ծակ ականց (լսածը իրեն չպահող)*, *ծակ աչք (ազահ)*, *նեղ աչք (ժլատ)*, *քոռ աչք (չկամ, նախանձոտ մարդ)*, *թաց աչք (արտասվող, ողբացող, սգացող մարդ)*, *օտար աչք (կողմնակի նայող, տեսնող, ոչ ցանկալի)*, *կոպիտ ձեռք (բռնի ուժ, բռնություն, խստություն գործադրող մարդ)*, *պինդ ձեռք (ժլատ)*, *սև ձեռք (չարագործ)*, *ծուռ երես (տհաճություն պատճառող մարդ)*, *կախ երես (մռայլ, խոժոռ)*, *կաշի երես (պնդերես, աներես մարդ)*, *քար սիրտ, բաց սիրտ, ծուռ վիզ, հաստ վիզ, ձախ ոտք (չարագուշակ, ձախողաբեր նշան է համարվում)*, *ծանր ոտք (մի տեղ չարագուշակ մուտք)* և այլն:

Անգլերենում հանդիպում են հետևյալ օրինակները՝ *wooden head* «հիմար, սպուշ մարդ», *feather-head/feather-brained* «թեթևամիտ, դատարկ, մակերեսային, անլուրջ», *addle-head* «ցրված, չկենտրոնացող մարդ», *big head* «պարծենկոտ, գլուխգովան», *evil eye* «1. անբարյացակամ հայացք, 2. չար աչք», *roving eye* «աչքաշոռ մարդ», *green eyes* «նախանձ», *numb hand* «անճոռնի/ասլիկար/անճարակ մարդ», *fresh/green hand* «անփորձ, սկսնակ», *a baby in arms* «ոչ հասուն մարդ/անփորձ», *light-fingered* «ձեռքից թույլ,



գողաբարո, գող», *pudding face* «գեր/ անհմաստ դեմք», *long face* «տխուր, մռայլ, դժգոհ դեմք», *poker face* «անարտահայտիչ, անշարժ դեմք», *frog face* «չշփվող, ձանձրալի դեմքով մարդ», *stiff neck* «հաստակող, համառ», *hard heart* «գաժան, անզգացմունք սիրտ», *trench foot* «ոտքի հիվանդություն (խոնավ խրամատներում մնալու հետևանքով)», *all legs and wings* «անհարմար զգացող բարձրահասակ երիտասարդ, որ չգիտե՝ ուր թաքցնի ձեռքերն ու ոտքերը» և այլն:

Վերոնշյալ օրինակներում թեև դարձվածքների իմաստն ուղղակիորեն չի բխում դրանց բաղադրիչների բուն կամ հիմնական իմաստներից, բայց նաև լիովին տարանջատված չէ և կապվում է դրանց արտահայտած այս կամ այն հատկանիշի հետ՝ ստանալով այլաբերական-փոխաբերական իմաստ: Հետևաբար, երկու լեզուներում էլ իրենց ինչպես «ձևաբանական, այնպես էլ իմաստաբանական-իմաստային կառուցվածքով դարձվածքները բառ-բաղադրիչների ոչ թե վայրիվերո, տարերային կամ մեխանիկական, այլ միանգամայն տրամաբանական ու օրինաչափական համադրությունն են կազմում» /Մարգարյան, 1990: 329/:

Գարձվածքներ են կազմվում ոչ միայն մարդու մարմնի մասերի անուններով, այլև երկու լեզուների հիմնական բառաֆոնդի այլ բառերով, որոնց, սակայն, հնարավոր չէ լիովին անդրադառնալ մեկ հոդվածի սահմաններում: Եվ ինչպես իրավացիորեն նշում է Ա. Մուրվալյանը. «Բայց եթե նայենք դարձվածքային արտահայտություններով ու ոճերով հարուստ հայոց լեզվի բացատրական բառարանը, կտեսնենք, թե դարձվածքային ինչպիսի և որքան արտահայտություններ ու ոճեր են խմբավորված բառային հիմնական ֆոնդի այնպիսի բառերի շուրջ, ինչպիսիք են՝ մարմնի անդամների, արտաքին աշխարհի առարկաների, երկնային մոլորակների, կենդանիների, բույսերի, հանքերի և նման ուրիշ առարկաների անունները» /Մուրվալյան, 1955: 163/:

Առօրյա խոսակցական լեզվում, օրինակ, շատ են կենդանիների անվանն առնչվող դարձվածքներ, ինչպես՝ *շան լակոտ*, *շան թուլա*, *շան ձագ*, *a dead dog* «անայիտան մարդ», *a dirty dog* «ստոր, անասուն, հիմար»: Գործածվելով խոսակցական լեզվում՝ սրանք ոճավորում են խոսքն ու դրան ամենատարբեր արտահայտչական երանգներ հաղորդում:

Այսպիսով, հայերենի և անգլերենի դարձվածային կապակցությունների քննությունը ցույց է տալիս, որ երկու լեզուներում շատ են ընդհանրությունները թե՛ դարձվածքների կառուցվածքային կաղապարների առումով, թե՛ դրանց արտահայտած իմաստների տեսանկյունից: Ուշադրության են արժանի գուզադրվող լեզուներում դարձվածքների իմաստային առանձնահատկությունները, որոնցով էլ պայմանավորված է դրանց ունեցած ոճական արժեքը: Թե՛ հայերենի և թե՛ անգլերենի խոսակցական լեզվում, ինչպես նաև գեղարվեստական խոսքում անգնահատելի է դարձվածքների դերն ու նշանակությունը, քանզի դրանք «կարևոր են ոչ միայն իբրև լեզվական շինանյութ, այլ որպես մտքի արտահայտման ազգային ձևեր» /Մելքոնյան, 1984: 200/:

Ավելորդ չենք համարում նշել, որ երկու լեզուներում էլ կան այնպիսի դարձվածքներ, որոնք թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ լիովին համարժեք են, ինչպես *sharp eye* «սուր աչք», *open hand* «բաց ձեռք, շռայլ», *evil eye* «չար աչք» և այլն, սակայն «կան դարձվածքներ, որոնք խիստ ազգային երանգավորում ունեն և նույնությամբ, բառացի կամ համարժեք եղանակով չեն կարող թարգմանվել մեկ այլ լեզվով» /Եզեկյան, 2003: 193/, ինչպես՝ *ծակ աչք, քոռ աչք, ծուռ վիզ* և այլն:

Դարձվածային կապակցությունների զուգադրական քննությունը երկու լեզուներում կարևոր նշանակություն ունի դրանց միջև տիպաբանական ընդհանրությունների որոշման տեսանկյունից: Այն նաև կարևորվում է անգլերենի և հայերենի ուսուցման, այդ լեզուների դասավանդման հարցում:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ. Խ. Հայոց լեզվի տեսություն, Երկեր, հ. 2, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1974;
2. Բեդիրյան Խ. Գ. Ուսումնական դարձվածաբանական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2002:
3. Բեդիրյան Պ. Ս. Դարձվածաբանական բացատրական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1971:
4. Բեդիրյան Պ. Ս. Հայերեն շրջասությունների բառարան, Սբ. Էջմիածին-ՌՆԾԱ, 2002:
5. Եզեկյան Լ. Կ. Ոճագիտություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2003:
6. Մալխասեանց Ա. Ս. Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, Հայկական ՄՍՌ պետական հրատ., 1944-1945:
7. Մարգարյան Ա. Ս. Ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1990:
8. Մելքոնյան Ս. Ա. Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, «Լույս» հրատ., 1984:
9. Մուրվալյան Ա. Ա. Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, Հայկական ՄՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1955:
10. Պետրոսյան Հ. Չ. Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1987:
11. Սեֆերյան Ս Ս., Լազարյան Ա.Ա. Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան, Երևան, Անկյունաքար, 2005:
12. Սուքիասյան Ա. Մ., Գալստյան Ս. Ա. Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1975:
13. Арнольд И. В. Лексикология современного английского языка. Москва: Высшая школа, 1986.
14. Кунин А. В. Большой англо-русский фразеологический словарь. Москва: Русский язык, 1984.

15. Пархамович Т. В. Англо-русский, русско-английский словарь фразеологизмов. Минск: Попурри, 2011.
16. Թրմաւան չ. Թ. Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1950:
17. Maugham W. S. The Painted Veil. Москва: «Международные отношения», 1981.

**С. КАРАПЕТЯН – Фразеологические сочетания с доминирующим существительным в армянском и английском языках.** – Фразеологизмы имеют важное значение во всех языках: они придают речи индивидуальность, выразительность и эмоциональность, в то же время способствуют ее краткости и сжатости. Целью данной статьи является рассмотрение особенностей именных фразеологизмов с доминирующим существительным в армянском и английском языках. Анализируются наиболее распространенные модели фразеологических оборотов с доминирующим существительным, рассматриваются компоненты фразеологизмов с точки зрения частеречной принадлежности, а также смысловые и стилистические особенности функционирования фразеологизмов.

**Ключевые слова:** фразеологические сочетания, существительное, доминирующее слово, модель, компонент, частеречная принадлежность, смысловые отношения, стилистические особенности, сопоставительный анализ

**S. KARAPETYAN – Phraseological Units with a Noun as the Head Word in Armenian and English.** – Phraseological units play an important role in all languages; they make our speech more impressive and emotional, at the same time contributing to its brevity and conciseness. The aim of the given paper is to study the nominal phraseological units in English and Armenian, particularly the constructions which have a noun component as a head word. The components of the phraseological units are studied from the point of view of their part of speech meaning. The semantic and stylistic peculiarities of the usage of phraseological units are also considered.

**Key words:** phraseological units, noun, head word, pattern, component, part of speech meaning, semantic relations, stylistic features, contrastive analysis